

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Դ .

Նախաբան Կիւմիս Խմորիւ :

ՆԱԿԵՐԵՂԻՆ Տիւթը հանելէն ետքը երբոր ետեւի գործողութիւնները յաջորդաբար ու շուտ շուտ չընես, կը սկսի այլայլիլ ու խմորիլ :

Հասուն բանջարին Տիւթը դիմա-հար կ'ըլլայ, գոյնը ճերմակ՝ դեղին կամ վարդագոյն . աս ջուրը թէ որ քիչ մը ատեն բայը դնես, մանուշակի գոյն կ'առնէ ու ետքը սեւի կը զարնէ : — Սմանք կարծեցին թէ Տիւթին ասանկ գոյնը փոխելուն պատճառը՝ ճզմելու ատեն երկաթ գործածելն է . բայց անանկ չէ . վասն զի Տիւթը նոյն այլայլութիւնը կը կրէ՝ նաեւ ապակիէ սանդի մէջ ծծելով :

Շաքարին Տիւթը թէ որ երկայն ատեն բացը դնես, կամաց կամաց կը թանձրանայ ու ինչուան հակըթի ճերմակուցին պէս՝ երբեմն ալ աւելի թանձր խժային Տիւթ մը կը դառնայ . ու թէ որ դաւազան մը մէջը խոթես ու հանես, Տիւթը անոր վրայ կը կպչի ու թել թել կը կախուի : Որչափ որ խժային ըլլայ Տիւթը, քսել է թէ այնչափ աւելի առատ շաքար կայ մէջը :

Նախաբան շաքար հանողը պիտի ջանայ որ Տիւթը խժային ու թանձր ըլլայ . ապա թէ ոչ, շաքարը չբերեղանար ու մաքուր ըլլար : Եւ բանիս համար՝ մէյմը ջանալու է որ գործողութիւնները շուտ շուտ ըլլան՝ որչափ որ կարելի է առանց ուշացնելու . մէյմըն ալ գործարանին մէջի բոլոր անօթները միշտ լուալու ու մաքուր պահելու է . չգործածուած անօթներուն երեսն ալ թեթեւ կերպով մը կիր քսելու ու այնպէս թողլու է որ

չորնայ, և հարկ եղած ատենը քիչ մը ջրով ցողուելու և այնպէս գործածելու է . նմանապէս գործածուած լաթերն ու կտաւները մաքուր պիտի ըլլան :

Տիւթին խմորմանը դէմն առնելու հնարքներէն մէկն ալ շատ կաթ սայ մէկտեղ գործածելն է :

Տիւթի գործածած փայտերէն մէկ բանին :

Երկին՝ : Եւ ծառը արհեստի մէջ խիստ շատ գործածականներէն է . բարձր լեռներու վրայ ու Եւրոպայի հիւսիսային կողմը կը բուսնի . բարձրութիւնը երբեմն ինչուան հարիւր ոտք կը հասնի : Որնայ դաշտերու մէջ ալ առաջ գալ, մանաւանդ կաւոտ տեղուանք, բայց աւելի դժուար է : Սովորաբար աշնան վերջերը կը կրտրեն աս ծառը՝ երբոր կ'ուզեն իրեն փայտէն տախտակ, գերան, և ուրիշ բաներ շինել, որոնք շինելու համար շատ պինդ պիտի ըլլայ, և օդուն մէջ շատ պիտի չկենայ : Իսկ երբոր կ'ուզեն օդու մէջ թողուլ, ան ատեն պէտք է կտրել՝ երբոր կը սկսի առատ խէժ վազցնել, որ ան ատեն երկայն կը դիմանայ : Եւ փայտը ան ատեն շատ յարգի ու օգտակար կ'ըլլայ՝ երբ որ թեթեւութեանը հետ մէկտեղ պնդութիւն ալ ունենայ, որ արհեստաւորները շատ կը փնտռեն . ասկէ կը շինեն գերաններ, սիւնակներ, սեղանատախտակներ, նաւակներ, ու թելինուագարաններու տակի ամանը, վասն զի ձայն հանելու աւելի յարմար կուգայ :

Եւրոպայի գեղեցիկ ծառ մըն է, փայտը կարծր ու խիտ, գոյնը մութ կարմիր . Եւրոպայի, Եւրասիայի ու Եւրասիական տաք երկիրները կը բուսնի ու շատ կը բարձրանայ . ասկէ կը շինեն սեղանատախտակներ,

1 Մէլէ . Իտ . Abete.

2 Իտ . Mogano. Գ.Պ. Acajou. ՏՃ . Մահա ալաճ :

որ երբեմն ինչուան տասը թիզ լայնութիւն կ'ունենայ : Եւ յով շատ մեծ վաճառականութիւն կ'ընեն . փայտը սովորաբար շիտակ է ու աղէկ կը փայլի . կահ կարասիք շինուինէ՝ աղուոր տեսք կ'ունենայ : Եւ գոյնը իրենց կարասիքը գրեթէ բոլոր մէկ կտոր մահոն փայտէ կը շինեն . իսկ Վաղղիա աս փայտէն շատ չգործածելու համար՝ բարակ մը կը կտրեն և ուրիշ հասարակ փայտի վրայ կը կպցընեն , և նոյնպէս աղուոր տեսք կ'առնէ՝ ինչպէս թէ մէկ կտորէ ըլլար : Սիւնայն նայելու է որ ան հասարակ փայտը՝ որուն վրայ մահոնը պիտի կպցուի՝ չոր ու հասուն ըլլայ . և անանկ սոսինձ մը պէտք է գործածել որ մահոնին մէջ չթափանցէ ու խոնաւութենէն չթուլնայ :

Որովհետեւ մահոնը երբեմն խիստ չոր չըլլալուն՝ օդին խոնաւութեամբը կը սկսի սենալ , Վալէնտը անունով մէկը աս գիւտս գտաւ որ խիստ պարզ կերպ է , և ի նտրայի ուսումնականք շատ գովեցին . այսինքն աս փայտերը դնելու է սնտուկի մը մէջ , կամ անանկ տեղ մը որ ծակերը բոլորովին գոցուած ըլլան . ետքը խալկինի մը մէջ տաքցուցած ջրի շոգին խողովակով մը ներս արձրկելու է . երկու ժամի չափ փայտերը անանկ շոգիի մէջ կենալէն ետեւ , երբոր կը տեսնուի որ փայտերուն մէջ բաւական թափանցեց գոլորշին , կը դուրսի մէկ ուրիշ տաք խողովակի մը մէջ . հոն ալ 24 ժամ կենալէն ետեւ կը սկսին գործածել : Եւ յայտնի է որ փայտերուն հաստութիւնը չափաւոր պիտի ըլլայ . իսկ թէ որ հաստ ըլլայ , աւելի երկայն ատեն պէտք է թողուլ՝ թէ շոգիի մէջ և թէ տաք տեղ՝ որ չորնայ : Սահոնին մեծ ու գեղեցիկ կտորներուն վրայ ալ շատ անգամ կանաչիկ բծեր ու երակներ կ'ըլլան , ու մէջը որդ գոյացած կ'ըլլայ . աս վերի ըսած կերպովս բոլոր ան բիծերը աներևոյթ կ'ըլլան ու որդերը կը ջարդուին :

Սահոնին մէկ տեսակն ալ կայ որ

երակները լայն են ու վրան ծակ ծակ է , և ծանրութիւնը առջինէն քիչ է . գոյնը խիստ մութ կարմիր ըլլալուն , ու աղէկ չփայլելուն համար յարգի չէ : Սմանք ասկէջ ալ կարասիք կը շինեն , և ընկուզի պէս վրան մեղրամոմ քսելով ու շփելով կը փայլեցնեն : Եւ մերիկայի մէջ մասնաւոր սնտուկներ կը շինեն ասկէ՝ վաճառականութեան համար :

Սահոնի գիտոր՝ : Եւ պտուղս կ'եղէ մէկ ծառի մը վրայէն՝ որուն բարձրութիւնը 22 թիզ է , ու Վերիկայի և Սիւնայի հարաւային կողմերը կը բուսնի . աս պտուղը երբոր սկսի թթուիլ , մէջէն աղէկ օղի կ'եղէ : Իրեն նուշէն եղոտ հիւթ մը կը հանեն , որ կտաւները երկրթի գոյն կը ներկէ՝ գրեթէ անջնջելի . անոր համար ներկարարները ասիկայ սև գոյնի տեղ կը գործածեն : Երբոր բուռն ծակելու ըլլաս , մէջէն ջրոտ խէժ մը կը վաղէ , որ աղէկ ուտողի՝ տեղ կրնայ գործածուիլ . փայտէ կարասիքը փայլեցնելու , ու խոնաւութենէ և որդերէ պահելու համար ալ կը գործածուի : Եւ անիւն փայտը ճերմակ ու կակուղ է . և որովհետեւ դիւրաւ կը ծռի , իրեն ճիւղերէն գորոցներու վրան կամարներ ու կտոր շրջանակներ կը շինեն :

Եւ գիտորին նուշը մանրանկարները՝ կը գործածեն՝ աղէկ սև գոյն ունենալուն համար , որ Զինու թանաքին պէս թեթեւ է : Եւ եղը հանելու համար՝ նուշին վրայի կեղևը կը ստրկեն , և ուրիշ սև գուներուն պէս ածուխ կը դարձնեն . ետքը երբոր կը մարի ու կը պաղի , որչափ որ պէտք է նէ կը ձգմեն ու կը գործածեն :

1 Խո . Noce di Mogano.

2 Էօօօ :

3 Սիւնայ :